ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«ՏՐԱՆՍ ՀԱՅԱՍՏԱՆ»

N 3

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2018

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԿՈՒ ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ս.թ. սեպտեմբերի 3-ին բողոք դիմում է ստացել երկու տրանս անձանցից Երևանի մարզասրահներից մեկում մարզասրահի աշխատակիցների կողմից խտրականության ենթարկվելու, սպառողական իրավունքի ոտնահարման, ազատ տեղաշարժման իրավունքի սահմանափակման և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի մասին։Սույն թվականի օգոստոս ամսին, ՀՀ քաղաքացիներ Մ.Ս.-ը և Ն.Ա.-ն մարզասրահի աշխատակիցների կողմից արգելվել է օգտվել մարզասրահի ծառայություններից, այն «հիմնավորմամբ», որ վերջիններս տրանս անձիք են, որն ուղիղ կերպով հայտարարվել է Մ.Ս.-ը և Ն.Ա.-ն։Մ.Ս.-ին և Ն.Ա.-ին աշխատակիցները ծաղրի են ենթարկել, վիրավորել, ստորացրել, դադարեցրել են մարզասրահի անդամակցությունը և արգելել մուտքը դեպի մարզասրահ։ Ելնելով վերոգրյալից՝ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հարցում է ուղղել մարզասրահի տնօրենին, պահանջելով պարզաբանել, թե ի՞նչ իրավական ակտերի հիման վրա է մարզասրահի տնօրենը Մ. Ս.-ի և Ն.Ա.-ի մուտքը արգելել՝ վերջիններիս կողմից արդեն իսկ ձեռք բերված աբոնեմենտները չեղարկելով։ Մարզասրահի անձնակազմի կողմից նման գործողություններն «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը որակում է որպես խտրականություն եւ դատապարտում է նման վերաբերմունքը տրանս անձանց նկատմամբ։ Տրանս անձիք մինչ օրս պաշտպանված չեն խտրական դրսևորումներից ՀՀ օրենսդրությամբ, քանի որ ՀՀ օրենսդրությունը չի կարգավորում գենդերային ինքնության և ինքնարտահայտման հիմքով խտրականության արգելքը։ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը պատրաստվում է դատական կարգով վերականգնել տրանսգենդեր անձանց իրավունքները։

ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

1991 թ. սեպտեմբերի **21**-ի հանրաքվեից հետո Հայաստանը հռչակվեց անկախ, ժողովրդավարական հանրապետություն՝ ԽՍՀՄ կազմից դուրս: Այնուհանդերձ մինչ այժմ արդեն իսկ **27** տարի անկախ համարվող հայ հասարակության մեջ ավանդական պատկերացումներն ու հստակ գենդերային դերերը հույժ կարևորվում են: Սակայն, ցանկացած «դերային» պիտակավորում արդեն իսկ սահմանափակում է անձի ազատությունը:Ցավոք, տրանսգենդեր անձանց կյանքը դեռ կախված է հասարակության այդ պատկերացումներից: ՀՀ-ում տրանսգենդեր անձիք զրկված են անձնական կյանքի իրավունքից, ենթարկվում են բռնության, ճնշումների, հասարակական պարսավանքի, ընտանիքների կողմից մերժման, խտրականության և խարանի՝ քարկոծվելով իրենց ազատ կամքի դրսևորման համար, երբ բացահայտվում է նրանց՝ հասարակության կարծրատիպային պատկերացումներից դուրս գենդերային ինքնությունն ու ինքնաարտահայտումը: Տրանսգենդեր անձանց հանդեպ հայ հասարակությունը դրսևորում է ոչ միայն ատելության խոսք, այլ նաև դա հաճախ վերածվում է ատելության հիմքով հանցագործությունների: **2017**թ.-ին «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը գրանցել է տրանսգենդեր անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունների **100** դեպք, իսկ **2018**թ.-ին՝**123**: Վիճակագրական տվյալներից ակնհայտ է դառնում, որ տարեցտարի արձանագրվում է բռնության և ատելության հիմքով հանցագործությունների թվի աճ տրանսգենդեր անձանց հանդեպ: «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիշեցնում է, որ մարդու իրավունքներն ու արժանապատվությունը ըստ ՀՀ Սահմանադրության հանդիսանում են գերագույն արժեք: «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հորդորում է ՀՀ իշխանություններին ապահովել ՀՀ տրանսգենդեր քաղաքացիների հավասարությունը՝ հակախտրականության, սեռափոխության, հորմոնոթերապիայի, անվանափոխության և ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ ընդգրկուն օրենսդրության ընդունման միջոցով: Սույն հայտարարությունն ուղարկվել է ՀՀ Նախագահին, ՀՀ Վարչապետին, ՀՀ Ոստիկանապետին,ՀՀ Գլխավոր դատախազություն, ՀՀ Աշխատանքի և Սոցիալական հարցերի նախարարին, ՀՀ Արդարադատության նախարարին, ՀՀ Առողջապահության նախարարին , ՀՀ Կրթության և Գիտության նախարարին, ԱԺ նախագահին, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ:

Ուրախ ենք տեղեկացնելու, որ «Ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամի» ֆինանսական աջակցությամբ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում տրանսգենդեր անձանց տրամադրվող իրավաբանական աջակցության արդյունքում Ագնես Մալխասյանն արդեն իսկ կարող է հանդես գալ իր գենդերային ինքնությանը և արտահայտմանը համահունչ նոր անվանափոխված անձնագրային անունով:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում ՀՀ արդարադատության նախարարությանը կից Քաղաքացիական Կացության Ակտերի Գրանցման գործակալությանը (ՔԿԱԳ) բարեխիղճ աշխատանքի համար: ՔԿԱԳ-ի հետ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը աշխատում է 2016թ.-ից և նրանց հետ փոխհամագործակցության արդյունքում հեշտացվել է բազմաթիվ տրանսգենդեր անձանց անվանափոխության գործընթացը:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը լինելով Հայաստանում և Հարավային Կովկասում առաջին գործող տրանսգենդեր կազմակերպությունը, շարունակելու է աջակցել տրանսգենդեր անձանց լուծելու իրենց առաջ ծառացած խնդիրները:

Ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամի ֆինանսավորմամբ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից անցկացվող դիմահարդարման և կարուձևի դասընթացների ծրագրի ավարտից հետո տրանսգենդեր անձ Նոռան, ավարտելով վերոնշյալ դիմահարդարման դասընթացները, ընդունվեց աշխատանքի «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունում որպես դիմահարդարման ուսուցիչ։
«Ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամին» դիմահարդարման և կարուձևի դասընթացների ծրագրային ֆինանսական աջակցության համար։
«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը և տրանսգենդեր համայնքը շնորհակալ է «Ժողովրդավարության Եվրոպական հիմնադրամին» դիմահարդարման և կարուձևի դասընթացների ծրագրային ֆինանսական աջակցության համար, որի շնորհիվ տրանսգենդեր, ինտերսեքս մարդիկ և սեքս աշխատողները հնարավորություն ունեն ձեռք բերելու նոր մասնագիտություններ և գտնելու աշխատանք Հայաստանում։

2018 թ.-ի սեպտեմբերի **21-23**ը «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության ներկայացուցիչները մասնակցեցին Ուկրաինայում կայացած Հետսովետական Տրանսկոալիցիայի կողմից կազմակերպված տրանս ճամբարին: Ճամբարին ներկա էին նաև բազմաթիվ տրանսգենդեր ակտիվիստներ այլ հետսովետական երկրներից: Ճամբարի ժամանակ կազմակերպվեցին պանելային քննարկումներ գենդերային ինքնության և սեռական կողմնորոշվածության, ինչպես նաև ոչ բինարության մասին: Քննարկվեցին նաև սեքս աշխատանքի բարդությունները, սպեցիֆիկան և խտրականությունը տրանսգենդեր անձանց հանդեպ:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, կազմակերպության պլանավորման մասնագետ Վրեժ Վարժապետյանը և տրանսգենդեր ակտիվիստ Նոռա Պետրոսյանը ներկայացրեցին «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպության եռամյա գործունեությունը՝ քննարկելով հետխորհրդային երկրներում տիրող տրանսֆոբ մթնոլորտը, հորմոնոթերապիայի և սեռափոխության գործընթացները կարգավորող օրենքների բացակայությունը Հայաստանի Հանրապետությունում:

Ուրախ ենք տեղեկացնել, որ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը դարձել է Եվրոպայում Սեքս աշխատողների Իրավունքների Միջազգային Կոմիտեի առաջին անդամը Հայաստանից, որպես միակ համայնքահեն տրանսգենդեր եւ սեքս աշխատողների իրավապաշտպան ՀԿ: Եվրոպայում Սեքս աշխատողների Իրավունքների Միջազգային Կոմիտեն ներառում է **102** կազմակերպություն Արեւմտյան, Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի **32** երկրներից: «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հուսով է, որ Եվրոպայում Սեքս աշխատողների Իրավունքների Միջազգային Կոմիտեի հետ համագործակցությունը, ինչպես նաև սեքս աշխատողների եւ տրանսգենդեր անձանց համար մարդու իրավունքների հավասարության զարգացումը կփոխեն տրանսգենդերների եւ սեքս աշխատողների հանդեպ վերաբերմունքը՝ հիմնվելով բոլոր մարդկանց համար արդարության սկզբունքի հիման վրա:

«Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն սկսել է տեսահոլովակների շարք տրանսգենդեր անձանց մասնակցությամբ, որտեղ վերջիններս խոսում ենք իրենց կյանքի և «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի ներդրման մասին իրենց կյանքում: Սեպտեմբերին նկարահանված տեսահոլովակները կարող եք գտնել հետևյալ հղումներով:

https://www.youtube.com/watch?v=VL7lsjF_iPk



https://www.youtube.com/watch?v=RUWpVweaPKw



https://www.youtube.com/watch?v=BmgBL_xRTyw



https://www.youtube.com/watch?v=GZtjv8BQAcM

ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԹԻՎ

ՖՈԿՈՒՍ ԽՈՒՄԲ ՀԱՆԴԻՊՈՒՄ **13**

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ **5**

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ **8**

ԱՌՈՂՋ ԶՐՈՒՅՑ ՁՄԵՐՈՒԿԻ ՇՈՒՐՋ **12**

ՎԱՆԵՍԱ ԿԱՄՊՈՍԻՆ ՀԻՇԱՏԱԿԵԼՈՎ ԻՆՔՆՈԳՆՈՒԹՅԱՆ ԽՈՒՄԲ **13**

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԿԻՐԳԻԶԻԱՅԻ **Y-PEER** ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՁԱՆԻՆԻ ՀԵՏ **4**

Սեպտեմբեր ամսվա ընթացքում միջոցառումների մասնակիցների թիվը

55

2018թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

ԲՈԼՈՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ

հրատարակչական գործունեություն

+374 11 880 770

www.rightsidengo.com

rightsidengo@gmail.com

@RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ